



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 175818 « 09 10 2017 Վ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ Ր ա մ ա յ ու մ ե մ

1. Երևանի պետական համալսարանում սովորողների տեղափոխության (այլ բուհերից, միջին մասնագիտական հաստատություններից, ներքին տեղափոխություն, ուսուցման համակարգի փոփոխություն, երկրորդ մասնագիտությամբ ուսուցում) արդյունքում առաջացող առարկայական տարբերությունները հանձնելու նպատակով ձևավորվող հանձնաժողովների համար սահմանել հետևյալ կազմը.

ա) ամբիոնի վարիչ կամ նրա կողմից (զեկուցագրով) առաջարկված տվյալ ամբիոնի պրոֆեսոր, կամ դոցենտ՝ հանձնաժողովի նախագահ,

բ) տվյալ դասընթացը կամ գործնական ժամերը վարող դասախոս,

գ) ֆակուլտետի ներկայացուցիչ՝ դեկան (դեկանի տեղակալ) կամ նրա կողմից (զեկուցագրով) առաջարկված անձ:

դ) ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչ՝ ըստ անհրաժեշտության:

2. Սահմանել, որ հանձնաժողովի անվանական կազմը ֆակուլտետի դեկանի կողմից պետք է ներկայացվի ԵՊՀ ռեկտորի հաստատմանը՝ քննությունների մեկնարկից առնվազն մեկ շաբաթ առաջ:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով իրազեկել ԵՊՀ ֆակուլտետներին:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետին (Հ. Ժամհարյան):

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ